ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, 091-55-33-40, lernanist1@rambler.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ապրիլի 2014թվականի N 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջը Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 4-ի թիվ **6** արտահերթ նիստի *ՕՐԱԿԱՐԳԸ՝*

1. Բյուջեի առաջին եռամսյակի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը:

2. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 73-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին :

3. Համայնքի վարչական տարածքում աղբահանություն կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանելու մասին:

4. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 3-ի N 70-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին :

Կողմ -6 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ Լ.ԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լ.Եռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, 091-55-33-40, lernanist1@rambler.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ապրիլի 2014թվականի N 23

ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը, համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, 091-55-33-40, lernanist1@rambler.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ապրիլի 2014թվականի N 24-ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ պահանջներով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ հանայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 3-ի "Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2014 թվականի բյուջեն հաստատելու մասին" N 73-ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1. Վարչական բյուջեի միջոցներից 1100.0 հազար դրամ հատկացնել ֆոնդային բյուջեվերը նշված գործարքները կատարելու համար:
2. 49.1. եկամուտ խմբի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե նախատեսել 1100.0 հազար դրամ:
3. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարել ֆոնդային բյուջե 01.1.1.51 օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում ծրագրի 5122 վարչական սարքավորումներ հոդվածին:
4. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարել ֆոնդային բյուջե 06.4.1.51 փողոցային լուսավորում ծրագրի 5221 նյութեր և պարագաներ հոդվածին:
5. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարել ֆոնդային բյուջե 05.4.1.51 կենսաբազմազանության և բնության պաշտպանություն ծրագրի 5131 աճեցվող ակտիվներ հոդվածին:

1. 11.1.2.52 ծրագրի 4891հոդվածի <<1895.5>> թիվը փոխարինել <<795.5>> թվով:
2. 01.1.1.51 ծրագրի 5122 հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<600.0>> թվով
3. 06.4.1.51 ծրագրի 5221 հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<300.0>> թվով:
4. 05.4.1.51ծրագրի 5131 հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<200.0>> թվով

1. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, 091-55-33-40, lernanist1@rambler.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ապրիլի 2014թվականի N 25

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ և 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի <<դ>> ենթակետով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք 14-րդ հոդվածով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համայնքի տարածքում իրականացվող աղբահանության աշխատանքների դիմաց աղբահանության վճար վճարողների համար սահմանել աղբահանության վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի (համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող) և /կամ/ փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական **50** դրամ

2. Աղբահանության վճար վճարող առանձին կատեգորիայի անձանց համար սահմանել արտոնություններ՝

1) Բազմաշունչ /7 և ավելի/ ընտանիքների համար – 50%-ի չափով

2) Սոցիալապես անապահով ընտանիքներին - 100 % -ի չափով

3) Միայնակ ծերերից կազմված ընտանիքներին - 100%-ի չափով

4) Հաշմանդամության կարգ ունեցող ընտանիքներին - 100% -ի չափով

5) Հայրենական Մեծ պատերազմի հաշմանդամների և Ղարաբաղյան կռիվներում վիրավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքներին - 100% -ի չափով

3. Համայնքային ենթակայության հիմնարկներին և կազմակերպություններին ազատել աղբահանության վճարներից:

4. Աղբահանության վճարների հաշվարկումը. վճարման կարգը և ժամկետները. վճարի գանձումը համայնքի բյուջե, ինչպես նաև վճարման պատասխանատվությունը իրականացնել <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2014 թվականի մայիսի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆ

5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ

6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, 091-55-33-40, lernanist1@rambler.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ապրիլի 2014թվականի N 26-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ պահանջներով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 3-ի " Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղական համայնքում 2014 թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը սահմանելու մասին " N 70-ն որոշման մեջ կատարել փոփոխություն, որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՋԱԳԱՆ
5. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
6. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ
համայնքի ավագանու 2013 թվականի
դեկտեմբերի 3-ի N 70-Ն որոշման
փոփ. համայնքի ավագանու 2013 թվականի
դեկտեմբերի 16-ի N 79-Ն որոշման
փոփ. համայնքի ավագանու 2014 թվականի
ապրիլի 4-ի N 26-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման / թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար.

1/ մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային տների / ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10.000 դրամ

2/ Սույն կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201 քմ մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10.000 դրամ:

բ. 501 քմ – մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ:

գ . 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ:

դ. ոչ հիմնական շինությունների տեղադրման հանար մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ

ե. 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման արդիականացման աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար,սահմանել՝

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն '3000 դրամ,

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա, բացի սույն կետի 1-ին

ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

4. Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 3000 դրամ:

5. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝ 4.500 դրամ :

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եսամսյակի համար սահմանել՝ 3000 դրամ:

6. Համանքի տարածքում՝

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

2/ հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլտվության համար սահմանվում է ընթացիկ տարվա համար՝ 50.000 դրամ:

3/ բարձր լեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10.000 դրամ:

4/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

- Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրականացման դեպքում՝6000 դրամ
- Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրականացման դեպքում՝ 1000 դրամ

7. Համայնքի տարածքում՝

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր տարվա համար՝ 50.000 դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի և զվարճանքի ,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները / սաունաները /

խաղատները , ժամը 24- 00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/ առևտրի օբյեկտների համար ՝25.000 դրամ:

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝50.000 դրամ:

3/ բաղնիքների /սաունաների /համար՝ 200.000 դրամ:

4/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 դրամ:

5/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 500.000 դրամ

6/ վիճակախաղերի կազմակերպման համար ՝ 150.000 դրամ

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ-ի տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ:

2/ թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝3500 դրամ:

3/ այլ արտաքին գովազդի համար՝1500 դրամ:

4/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 500 դրամ:

11 . Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայությունն իրականացնելու թույլտվության համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 դրամ:

12. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու , ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝1000 դրամ:

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար սահմանել՝ 5000 դրամ:

15. Համայնքի վարչական տարածքում աղբահանություն կազմակերպելու համար, աղբահանության վճար սահմանել ըստ հաշվառված անձանց քանակի (համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող) և /կամ/ փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 50 դրամ:

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ